Տեղեկությունների ստացման բաժնետերերի իրավունքը

Բանկի յուրաքանչյուր մասնակից համաձայն "Բանկերի և բանկային գործունեության մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի իրավունք ունի ստանալու բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները: Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 2%-ին և ավելիին տիրապետող յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու "Բանկերի և բանկային գործունեության մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված տեղեկությունները:

Տեղեկությունները կարող եք ստանալ գրավոր դիմումը ներկայացնելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոնշյալ տեղեկությունները Բանկի կողմից տրամադրվում են անվճար: Դիմումը կարող եք ներկայացնել առձեռն՝ Գլխամասային գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ, փոստով՝ ՀՀ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 13 հասցեով, ինչպես նաև office@ardshinbank.am էլեկտրոնային հասցեով: